




Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

1936 թվականի հուլիսի 8-ին վախճանվեց Բարգեն կաթողիկոսը և թաղվեց Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում: Կիլիկյան Աթոռը որբացավ: 1939 թվականին, 91 տարեկան հասակում, վախճանվեց նաև Սահակ Բ կաթողիկոս Խապայանը: Աթոռը կրկին այրիացավ:

Այստեղ արժի արձանագրել պատմության համար, որ Սահակ և Բարգեն կաթողիկոսների ժամանակից սկսյալ որոշ շրջանակներ փորձում էին հակադրել Անթիլիասը էջմիածնին: Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը «Սիոն» ամսագրի 1937 թվականի հունիսի համարում «Անհարկի փութկոտություն» առաջնորդողի մեջ, հանգամանորեն քննության առնելով նման քայլի ոչ միայն «անարդար, այլ նաև վնասակար» լինելը, գրում էր հետևյալը.

«Անթիլիասի Կիլիկյան կաթողիկոսարանի գետինին՝ պատվական բարեբարի մը շնորհիվ՝ ազգապատկան դառնալը բնական է, որ պիտի ծնունդ տար անկեղծ ուրախության, և գոհ ենք անշուշտ, որ ընդհանուր է այդ կերպով տեղի ունեցած արտահայտությունը:

Համամիտ չենք կրնար ըլլալ սակայն այդ առթիվ հրապարակ նետված այն տեսության, թե ուրեմն ա՛լ ժամանակն է, որ խորհրդի կարիքության մը վրա՝ ձևացնելու համար հայ եկեղեցական վարչության թեմական պարագրություն մը, կազմված՝ իսլամ կամ մասնավորաբար արաբ երկիրներու մեջ ապրող հայ գաղութներու միությանմբ, որուն նվիրապետական կեդրոնն ըլլա Անթիլիաս:

* Երրոնակված «էջմիածին» ամսագրի 1959 թվականի Ը—Թ և Ժ համարներէրց:

Եթե այս կարծիքին դիտումն է ընդարձակել և այդ կերպով զորացնել Լիբանանի և Սուրիոյ Կիլիկյան այդ նորակազմ թեմը, մենք կխորհինք, թե հակառակ արդյունք մը միայն ձեռք պիտի բերվի այդ կերպով: Իսկ եթե կմտածվի, թե էջմիածին կարող չէ այլևս ներկա դրության մեջ իր հոգևոր իշխանությունը լրիվ գործադրել ամեն կողմ, և հետևաբար պետք է չափով մը գեթ թեթևցնել իր վրա ծանրացող բեռը ի նպաստ Կիլիկյան Աթոռին, այս վերջինին տալով Մայր Աթոռոյ փոխանորդության տիտղոս մը նույնիսկ, ինչպես էր դեռ երեկ Կոստանդնուպոլսո Պատրիարքության պարագան, մենք կնկատենք դարձյալ, թե ոչ միայն անարդար պիտի լինեն այդպիսի արարք մը, այլ նաև վնասակար:

Խոսելով առաջին կետին վրա նախ, պիտի ուզեինք ըսել, թե այդ չէ երբեք Կիլիկյան կաթողիկոսական կեդրոնին ու թեմին բարգավաճման բանավոր և գործնական կերպը կամ միջոցը: Վարչական մարմինները կամ դրությունները, անոնք մանավանդ, որ կրողն արարչական բնույթ ունին, ընդարձակվելով չեն զորանար բնավ. բայց զորանալի վերջ կրնան ընդարձակվիլ, եթե սակայն իրենց նկարագիրը կամ գոյապատճառը իրենց հարկադրեն զայդ: Անթիլիաս ներքնապես զորանալու պետք ունի այժմ և ոչ թե ընդարձակվելու: Իր ներկան դեռ վատուժ վիճակին մեջ, ընդարձակումը ճապաղում միայն պիտի նշանակեր իրեն համար, այսինքն լայնորեն ջլատում ուժեղում:

Հոգեւույս Բարգեն Վեհի և Եահե արքեպիսկոպոսի օրով իսկ, այսինքն հրե դեռ այդ

կրոնաստանին մեջ կապրելին և կգործելին անհամեմատ աստիճանով բարձր կարողություն ներկայացնող երկու հոգևորականներ, այդ տեսակ իղձ կամ մտածում գետին չզբտավ երբեք այդ հողին վրա: 1932-ին, Եգիպտոսին Անթիլիաս վերադարձին, Երուսաղեմ այցելած ատեն, հրե մտերմորեն հարցուցինք ողբացյալ Վեհին, թե ինք տեղեկություն ունի՞ր արդյոք «Բուրս Էթիպսին»-ին մեջ իրենց Աթոռը «Մերձավոր Արևելքի Հայոց Կաթողիկոսություն» որակված ըլլալն, ինք բացորոշապես հավաստեց ո՛չ միայն անտեղյակ, այլ նաև բոլորովին անհամամիտ ըլլալը այդպիսի բանի մը: Լոկ խոսք չէր որ կընեիր: Նույնը գործնապես ալ ցույց տվավ, երբ Ամերիկային և այլուտ բարեկամներ խընդրեք էին, որ Աստվածաշունչի թարգմանության Ժն-դարյան հոբելյանին գլուխ անցնի, պատասխաններ էր, թե «Մայր Աթոռո պատկանյալ գործ է այդ: Մեզի անձանթ չեն արդարև թունդ կրիկեցիի ոգվով մշակած իր պատմաքննական հայացքները Կրիկյան Աթոռին անցյալին և նույնիսկ ապագային մասին. բայց շատ ավելի քաջ ճանչցած ենք նկարագրի այն պարկեշտությունը, որով ինչպես բուն Աթոռակալը, Սահակ Վեն, նույնպես և ինձ ողբացյալ Աթոռակիցը վերաբերվեցան միշտ Մայր Աթոռո հանդեպ, ոչ մեկ ատեն խորհելով որևէ ռաճագության մասին՝ Ընդհանրական Հայրապետության շրջանակեն ներս, այս կամ այն կերպով կամ տիրուղոսով (ընդգծումը խմբագրությանն է):

...Արդ, ինչպես ակնարկեցինք վերև, Անթիլիասի, որուն ներկա վիճակը որևէ ատենն ավելի ա՛յժմ իսկապես պետք ունի ներքին ուժեղացումի, պետք է խնայել որևէ նոր և ավելի ծանրություն: Գետնի մը տիրանալը անոր համար թեև առավելություն և օրհնություն է անշուշտ, բայց չէ ամենայն ինչ, մասնավանդ թե սկզբնավորություն է նոր կարիքներու: Կարելի է ըսել, թե մերկ հող մըն է ան. զի եղած շենքերը անցողական պետքերու համար կանգնված հասարակ շինվածքներ են տաղավարի ձևով հարդարված, որոնք երկար չեն կրնար տոկալ ծովեզրի այդ տոթին և թացության մեջ: Հարկ է հետզհետե կառուցանել հոն դպրոց, միաբանության բնակարան, աշակերտաց ննջարան, տպարան, մատենադարան, հավաքման կամ հանդեսներու սրահ, և հետո, եթե ոչ ամենեն առաջ, Մայր Տաճար Կաթողիկոսական Աթոռի. բայց նա թույլ պիտի տալի ինձ ըսել, նյութական այդ բոլոր շինությունեն առաջ՝ կազմավորել և զորացնել անոր մեջ հոգևորական և մտավորական կյանքը, այն ուղղությամբ և ոգվով՝ զոր հոն սկսած և ըստ բավականին հառաջացուցած էին Բաբգեն Վեհն ու Շահն:

...Անթիլիասը սիրողները պետք է անոր նկատմամբ իրենց համակրությունները այդ ուղղության վրա դնեն, և ցանկան, որ իր թերևս անձուկ բայց կարևոր շրջանակին մեջ անիկա արդյունավորվի իրոք և իրավամբ:

Այս մասին ունինք դեռ ըսելիքներ. բայց առայժմ նայինք մեղալին մյուս երեսը:

Բայց մենք չկրցինք հասկնալ նախ, թե ուսկի՞ց հանկարծ ծագեցավ էջմիածինը այս խնդրույն խառնելու իղձը: Եթե փոխանակ լոկ գետնի գնման, Կաթողիկոսարանի, Տաճարի և միաբանարանի և այլն շինություն լուկ կատարված լիներ այսօր հոն, պետք պիտի լինե՞ր արդյոք Ընդհանրական Հայրապետության թեմական քարտեզին վրա զեղչումներ կամ իրավասության մեջ փոփոխություններ կատարելու: Ի՞նչ կամ ի՞նչ կարգի արևմտյան հայության հետ պատերազմեն առաջ Մայր Աթոռո ունեցած հարաբերությունները կամ անոնց հանդեպ իր պարտականությունները՝ զորս այսօր իբր թե չկարենա գործադրել ան պատշաճորեն:

Մեր ըմբռնումով, այդ հարաբերությունները կամ պարտականությունները գլխավորաբար սա կերպերուն կվերածվին. կրոնական, նվիրապետական, եկեղեցա-իրավաբանական: Ըստ այսմ.

ա) Ընդհանրական Հայրապետը, իբրև գերագույն ուղղիչը, ուսուցողը և ավանդապահը Հայաստանյայց հավատքին, կհսկի ժողովական օրենքներով և կանոններով, հայրապետական հրահանգներով և տնօրինություններով և հաստատուն ավանդություններով ճշտաբանված և ճանչցված հայ դավանության անթերի գործադրությանը վրա, այդ մասին հարկավոր եղած բացատրությունները տալու կամ այդ առթիվ գոյացած վեճերը վճեկելու հեղինակությամբ, ի հարկին եկեղեցական ժողովո գումարումով:

բ) Իբրև Գլուխ Հաջ. Եկեղեցվո նվիրապետական կազմին, կօրհնե Ս. Մյուռոնը, որով կկատարվին հոգևոր շնորհաբաշխությունները, կձեռնադրե Եկեղեցվո բարձրագույն աստիճանավորները, այսինքն եպիսկոպոսները, անոնց ի հարկին տալով նաև պատիվ և տիտղոս արքություն, և, ըստ արժանյաց, կկատարե տվություն վարձույն և պատվո նշաններու:

գ) Իբրև վերին դատավոր եկեղեցական առյանի, կընդունի և նկատի կառնե կրոնական և եկեղեցական, և այդ նրկութի վերաբերող վարչական հարցերը, որոնք իրեն կմատուցվին կամ որոնց ինքը պետքը կտեսնե միջամտելու. և, ի հարկին խորհրդակից ժողովներու հետ միասին քննելով, վճիռ կարձակե անոնց մասին, և կկատարե պատ-

ժական ամեն տնօրինություն կապելու և արձակելու:

Ի վերջո, Գերագույն Պետի և բարձրագույն վերահսկողության իշխանությունը հանգամանորեն և գիտակցությամբ գործադրելու համար պարբերաբար կղրկե հանուն իր հոգևոր տեսուչներ, պատվիրակներ և նվիրակներ, այցելելու, գործոց և պարագայից տեղեկանալու, և ոգևորելու և մխիթարելու համար:

Այս է, հրեղհանուրն, Ամենայն Հայոց Հայրապետի դիրքը վերաբերմամբ իր հոգևոր հոտին, մասնավորաբար այն վիճակներուն, որոնք արտաքուս են Ռուսաստանյայց մարզեն, որուն թեմական վիճակներու ազգային ժողովրդական կամ եկեղեցա-հասարակական գործոց մասին ավելի սերտ իրավասություններ ունեն Ազգին Վեհը, իբրև պատրիարքը ռուսահայոց: Այդպիսի մասնավոր իրավասություններ ունի էջմիածին դեռ Ամերիկայի կամ Նիդրլանդայի այն հայ գաղութներուն հանդեպ ևս, որոնց համար վաղուց, հրիմյանի օրով կամ հետո մասնավոր կանոնադրություններով իրավակարգեր էին սահմանված:

Տեղն է հիմակ հարցնել, թե էջմիածին ցարդ ե՞րբ թերացավ մատնելով ամբողջ ապրտակաևությանց մեջ՝ հանգեալ իր արևմտահայ վիճակներուն և մասնավորաբար անոնց, որոնց առիթով է, որ կորվի հարցը: Ոչ ոք պիտի կարենա հաստատական պատասխան տալ այս հարցումին. զի ակներև են և բացատրության անկարգո՝ էջմիածնի գործն ու ընթացքի այս մասին (ընդգծումը խմբագրությանն է):

... էջմիածին որևէ ատենն ավելի պետք ունի Սփյուռքի բովանդակ հայության հավատարմության. ու մենք ամենքս ամեն ժամանակի գերիվերտ աստիճանով հարկադրված պետք է զգանք ինքզինքնիս կատարելու անոր հանդեպ մեր պարտականությունը:

Հոգևոր վերագիտողության գործը, որ պաշտոնն է Մայր Աթոռո, իր պատվական Գահակալը ահա կկատարի որքան խոհական՝ նույնքան քաջարթուն կերպով: Պետք չէ շարժել պատվանդանը, այսինքն ժողովուրդին անխախտ սիրայն գրավակաևը դեպի Լուսավորչի նվիրական Գահը, ո՛րևէ շափով, ո՛րևէ կերպով (ընդգծումը խմբագրությանն է): Ընդհանրական Մայր Աթոռը չի դժգմիր, երբ Կիրիկյան մասնավոր Կաթողիկոսության Աթոռին հանդեպ ամենքս ցույց տանք ջերմ համակրանք, և քաջախրական անվերապահ վերաբերմունք անոր զարգացման և զորացումին համար: Բայց Ազգին իսկ հանդեպ արդարամիտ մնալու կարիքը կազդարարի մեզի, թե՛ պետք չէ զայն մոռնալ՝ զայս հիշելու համար: Սա՝ պատմական հարկա-

դրանքներու ծնունդ՝ կպահե դեռ անտարակույս իր գոյության պատճառը, իսկ ան՝ մեր ազգային և կրոնական իդեալին հետ կապված անհամեմատ սրբություն՝ ամենքս կհրավիրե իրեն նկատմամբ աննահանջ պարտաճանաչություն:

«Ձայս արժան է առնել և զայն լիողուլ»՝ այս պետք է լինի, այս հարցին մեջ մանավանդ, մեր ուղեգիծը: Տարբեր ընթացք, ըստ մեզ, անհարկի փութկոտություն է միայն:

1940 թվականին կաթողիկոս է ընտրվում Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը, որը Բարձրեն կաթողիկոսի մահից հետո ընտրվել էր կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ: Ուրաճյանը չորս ամիս հետո վախճանվում է: Կաթողիկոսական փոխանորդ է ընտրվում Նիշն արքեպիսկոպոս Կարոյանը, որի օրով պատրաստվում է Կիրիկիայի կաթողիկոսական ընտրության կանոնադրությունը 1941 թվականին՝ «Կանոնադրություն Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիրիկիո» խորագրի տակ, 36 հոդվածներից բաղկացած, որի երկրորդ գլխի՝ «Ընտրություն Ս. Կաթողիկոսի» 11-րդ հոդվածով, Կիրիկիո կաթողիկոսի ընտրության մասնակցելու իրավունք է նախատեսվում Մայր Աթոռին՝ երկու ներկայացուցչով:

Ըստ այդ կանոնադրության (հոդված 28, կետ «Գ»), կաթողիկոսական տեղապահ է ընտրվում հաղ արքեպիսկոպոս Աջապահյանը:

1941 թվականի ապրիլին Մայր Աթոռում հրավիրվում է Ազգային-եկեղեցական ժողով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար: Ժողովին ներկա է լինում նաև Կիրիկյան Աթոռի տեղապահ հաղ արքեպիսկոպոս Աջապահյանը: Համաշխարհային երկրորդ պատերազմի պատճառով, Սփյուռքի թեմերի շատ պատգամավորներ չեն կարողանում ներկա գտնվել ժողովում: Ուստի ժողովը որոշում է հետաձգել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը մի բարեպատեհ ժամանակի: էջմիածնում գումարված այս ժողովը Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանին միաձայն ընտրում է Ամենայն Հայոց Հայրապետության Տեղակալ:

1943 թվականի մայիսի 10-ին Անթիլիասում գումարվում է Կիրիկյան թեմերի պատգամավորական ժողով՝ տեղապահ հաղ արքեպիսկոպոսի նախագահությամբ: Կաթողիկոս է ընտրվում Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ և Մայր Աթոռի նվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: Պատերազմի պատճառով Մայր Աթոռը չի կարողանում մասնակցել այս ընտրության:

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, չեղև Ամերիկայում գտնված ժամանակ, իր

ապագա գործունեության համար կազմել էր մի ծրագիր, որը հրատարակում է Անթիլիասի կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրում, 1944 թվականին, «Մեր իղձերն ու հույսերը որպես կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո» խորագրի տակ: Տանն Կիլիկիո ընտրվում է մեծահմուտ հայրապետը գրում էր. «...Դորանից հետո, իբրև Հայ Եկեղեցու բարձրագույն պաշտոնյաներից մեկը, մեր առաջին իղձը կլինեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայրաքաղաքի Պատրիարքի ընտրությունը կատարված տեսնել խորհրդային իշխանության և Հայաստանի կառավարության բարեհաճ և բարյացակամ տրամադրության տակ, ինչպես արտահայտվել է երիցս:

Մայր Աթոռի երկարատև թափուր մնալուց հետո, պատերազմի հետ կապված պատճառներով, ցանկալի է, որ նորա Գահակալի ընտրությունը կատարվի ամենայն փառավորությամբ և շքով ոչ միայն խորհրդային երկրների, այլև Սփյուռքի հայության եկեղեցական և աշխարհիկ պատգամավորների լիակատար մասնակցությամբ:

Իսկ մենք, իբրև Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, կկամենայինք մեզ ենթակա եպիսկոպոսների հետ նույնպես ներկա լինել ընտրության և ապա գլխավորել նորընտիր Ամենայն Հայոց Հայրապետի և Կաթողիկոսի ձեռնադրության և օծման սրբազան արարողությունը: Այդ կլինեն պատմական արժեքով մի դեպք, եկեղեցական-համազգային նշանակությամբ, շեշտելով Հայաստանյայց Եկեղեցու անբաժանելի միությունը՝ բոլոր բարձր Աթոռների սերտ գործակցությամբ:

Այս ընդհանուր, բայց սրտագին ցանկության կկամենայինք կցել մեր իղձերն ու հույսերը Կիլիկիո Աթոռին նկատմամբ: Կիլիկիո Աթոռը Մայր Աթոռի համեմատությամբ շատ նսեմացած էր, աղքատ, նույնիսկ Կիլիկիայում եղած ժամանակ: Իսկ իբրև փախստական Անթիլիասում հաստատվելուց հետո, առանց եկամուտների, կալվածների, դրամական հասույթների...:

Բայց Կիլիկիո Աթոռը դեր ունի կատարելիք. նա իր դերը ունի կատարելիք ոչ միայն իր շուրս եպիսկոպոսությունների կամ առաջնորդությունների համար, որպիսիք Բյուրուքի, Հալեպի և Դամասկոսի վիճակներն են Սուրիո մեջ և Կիպրոսը, պատմական շատ հիշատակներով կապված մեր Կիլիկյան շրջանի պատմության հետ, այլև այդ սահմաններից դուրս...» («Էջմիածին», 1944 թ. հունիս, էջ 20—21):

Այնուհետև նորընտիր կաթողիկոսը, դեռևս իր Աթոռը չմեկնած, Ամերիկայի առաջնորդարանի «Հայաստանյայց Եկեղեցի» պաշտոնաթերթի 1944 թվականի № 9-ում, «Հայ

եկեղեցական և ազգային կյանք» խորագրի տակ իր հայտնի հոդվածում, ուժգին հակահարված էր հասցնում Ամերիկայի թեմը Ս. Էջմիածնից անջատելու և Անթիլիասին միացնելու տխուր փորձերի հեղինակներին: «Պայքար» օրաթերթի 1944 թվականի հունիսի 21-ի համարում մի ոմն Փափազյան առաջարկել էր Ամերիկայի թեմը բաժանել Ս. Էջմիածնից և միացնել Անթիլիասին: Այդ առթիվ գրում է Գարեգին Վեհր. «Հայտնում ենք մեր հավատացյալ ժողովուրդին, որ հարգելով իսկ պր. Փափազյանի անձնավորությունը և բարի նպատակը Հայաստանյայց Եկեղեցին զորացնելու մտահոգությամբ, նրա վերջին առաջարկության, այսինքն Ամերիկայի թեմը հանել էջմիածնի վերահսկողությունից և ենթարկել Կիլիկիո Կաթողիկոսության, ոչ միայն համամիտ չենք, այլև համարում ենք ոչ օգտակար: Հայոց Հայրապետությունը և Եկեղեցին մի է և էջմիածնի Հայրապետը ավագ եղբայրն յուր պաշտոնով և դիրքով: Կիլիկիո Կաթողիկոսությունը, ինչպես նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունները յուրաքանչյուրին յուր հնարավորությունների և պայմանների և սահմանների մեջ պահելով հանդերձ, յուր ներքին վարչական ձևակերպությունները պետք է օժանդակ հանդիսանա Եկեղեցու ամբողջականության և բարոյական ներգործության զարգացման: Մասնավորելով խոսքը մեր մասին, պիտի հայտնենք, որ իբրև ընտրյալ կաթողիկոս Տանն Կիլիկիո, ոչ միայն էջմիածնի դեմ հյուսիս շափ հակառակքալ չենք անի, այլև մեր բոլոր հարկավորություններով պիտի աշխատինք պահպանել մեր բարի և եղբայրական հարաբերությունները, օժանդակ հանդիսանալով նրան նյութապես և բարոյապես էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռին»:

Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը 1945 թվականի ապրիլի 8-ին ձեռնադրվեց կաթողիկոս և հունիսի 2-ին ուղևորվեց Ս. Էջմիածին, Կիլիկյան թեմի պատգամավորների հետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսություններին նախագահելու:

1945 թվականի հունիսի 16-ին Ս. Էջմիածնում բացվում է Ազգային-եկեղեցական ժողովը: Հունիսի 18-ին, ժողովի երկրորդ նիստում, քննության է առնվում 14 հոդվածներից բաղկացած «Ազգային-եկեղեցական ժողով գումարելու հատուկ կանոնադրություն»-ը, որի 5-րդ հոդվածում ասվել է, որ «Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են: Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիվանդության դեպքում

Ազգային-եկեղեցական ժողովին նախագահում են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի և կամ Կոստանդնուպոլսի պատրիարքները» (6-րդ հոդված)։

Ի պաշտոնե Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը իր եպիսկոպոսներով և Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքները։

Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են նաև Ս. Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո, Ս. Երուսաղեմի միաբանության, Կոստանդնուպոլսի Պատրիարքության մեկական ներկայացուցիչները (հոդված 10)։

Հունիսի 22-ին գումարվում է ընտրական ժողովը Մայր Տաճարում, Գարեգին կաթողիկոսի նախագահության տակ, որը հանդես է գալիս գեղեցիկ, սրտառու ճառով։

«Ճանկալի պայմանների մեջ մենք հավաքված ենք այստեղ մեր կաթողիկոսն ընտրելու։ Առաջին անգամն է մեր ամբողջ պատմության ընթացքում, որ Տանն Կիլիկիո կաթողիկոսը ներկա է գտնվում կաթողիկոսական ընտրությանը։ Այսպիսի ժողովի գումարումը մեր պատմության մեջ հազվագյուտ է. շատ քիչ է պատահել, որ այսպիսի ներկայացուցչություն հավաքված լինի։ Ազգային-եկեղեցական ժողովին են ներկայացել հեռավոր Ամերիկայի հայության ներկայացուցիչները, Եգիպտոսի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բալկանյան երկրների հայերի պատգամավորները և խորհրդային երկրների ու թեմերի առաջնորդներն ու ժողովրդական ընտրյալները։ Որոշ տեղեկություններ կան, որ Հարավային Ամերիկայի պատգամավորները նույնպես ճամբա ելած են, բայց տեղի հեռավորության և ճանապարհի դժվարությունների պատճառով դեռ չեն հասել։

Արտաքին կարգի նշանակություն ունի այս համագումարը, որովհետև թե՛ մեր երկրամասի և թե՛ գաղութների այս ներկայացուցչությունը հանդես է բերում մեր Եկեղեցու միասնությունը։

Երգամար սկսեցինք այս ժողովը Ազգի և Եկեղեցու անունով, կկամենայի, որ ժողովը նվիրական և սրբազան մնար իր պարտավորությունների հանդեպ, կկամենայի այնպիսի ընտրություն կատարվել, որ ընտրյալը լինելու Ազգի ընտրյալը։ Կաղոթեմ այս դարավոր եկեղեցու սրբազան կամարների տակ, որ Տեղը առաջնորդեց մեզ և մենք պատասխանատու չմնանք մեր խղճի և ժողովրդի առաջ» (Շեք-միածին, 1945 թ., հունիս-հուլիս, էջ 37)։

Ինչպես հայտնի է, 1945 թվականի կաթողիկոսական ընտրության արդյունքը եղավ այն, որ կաթողիկոս ընտրվեց ազգընտիր տեղակալ Գևորգ արքեպիսկոպոս Զորեքչյանը։

«Հասկ»-ի 1945 թվականի օգոստոս-հոկտեմբեր համարում Գարեգին կաթողիկոսը գրում էր «Ազգային ժողովը և նրա նշանակությունը» խորագրով հոդվածում. «Կատարվեց ինչ որ հայության իղձն էր տարիներից ի վեր, և կատարվեց լավագույն կերպով. Հայ Ազգային-եկեղեցական ժողովն էր այդ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի փառավոր և միաձայն ընտրությամբ։

Բացառիկ երևույթ էր մեր պատմության մեջ տեսնել համայն հայության ներկայացուցչությունը հոգևոր և աշխարհիկ դասերի Մայր Աթոռի կամարների տակ, սկսած Բուենոս-Այրեսից, Հյուսիսային Ամերիկայից, Եվրոպայի բոլոր գաղութներից, Եգիպտոսից, Պաղեստինից, Լիբանանից, Սիրիայից, Պարսկա-Հնդկաստանից, նստած կողք-կողքի խորհրդային Հայաստանի և Միության հեռավոր թեմերի պատգամավորների հետ։ Տասնյակ հազար մղոններով իրարից հեռու ընկած տարածությունները, ծովերն ու օվկիանոսները, ներկա ժամանակի հետ կապված ճանապարհորդական դժվարությունները մեծածախս, չէին կարողացել արգելք լինել ներքին մղման և բուռն ցանկության, համախմբվել հինավուրց Տաճարի սրբազան կամարների տակ և կատարել իրենց պարտականությունը դեպի Եկեղեցին։ Այս ակնհայտնի; ամենքի համար տեսանելի և հասկանալի արտաքին ապացույցն էր, թե հայ ժողովրդի համար ո՞րքան մոտ է Հայաստանյայց Եկեղեցին յուր Մայր Աթոռում և Ամենայն Հայոց Հայրապետությանը, որ իբրև մագնիսական ուժ իրար էր բերել այդպիսի հոծ թվով ներկայացուցչություն աշխարհի ամեն անկյուններից, ուր հայություն կա խմբված։

... Ուշադրության արժանի և բացառիկ երևույթ էր ժողովականների մեջ երևան եկած ներդաշնակ և փոխադարձ հասկացողության գալու տրամադրության հոգին։ Մենք չենք տեսնել այդպիսի մի մեծ ժողով, համակված սիրո և համերաշխության այնպիսի հոգով, ինչպես այստեղ։ Հարավային Ամերիկայից մինչև Ռուսաստանի խորքերի պատգամավորները, տարբեր երկրների և պետությունների, տարբեր լեզուներով, սովորույթներով և օրենքներով ղեկավարվող ազգերի միջից եկած, շատ և շատ խնդիրների մեջ էլ, բնականաբար, տարբեր հայացքներով և ըմբռնումներով... զգում էին այստեղ մի, մի մեծ իրար հետ կապված ամբողջության մասերի ներկայացուցիչներ և անդամներ։ Այդ միության ներքին, մղիչ ուժը և՛ եկեղեցական էր և՛ հայրենասիրական։

... Միության այս կապը և դիտակցությունը երևան եկավ և շեշտվեցավ և մի այլ կողմից, թե մի է, անբաժանելի Հայաստանյայց Եկե-

ղեցին, որքան և վարչական տեսակետով տարբերություններ լինեն յուր մասերի մեջ: Երուսաղեմի Պատրիարքությունը յուր ներքին կառավարության մեջ այլ ձև ու կերպարանք ունի, Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը այլ էր յուր սահմանադրական կազմակերպության մեջ, իսկ ավելի առաջ յուր աթոռակալների գիրքով Օսմանյան պետության մեջ, Կիլիկիո Կաթողիկոսությունը այլ, յուր անկախ և եկեղեցական պետի ավանդություններով, բայց ընդհանուր միության գաղափարը միշտ պահպանված, որ այս անգամ առանձնապես շեշտվեցավ: Ներկա էին նախ և առաջ Երուսաղեմի պատրիարքն անձամբ ու Կոստանդնուպոլսո պատրիարքական տեղապահ, իրենց պատգամավորներով, և ոչ թե ներկայացուցիչներով, ինչպես սովորական էր: Իսկ Կիլիկիո Կաթողիկոսությունը ոչ միայն առաջին անգամ էր մասնակցում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության, այլև կաթողիկոսն անձամբ ներկա էր ժողովին յուր եպիսկոպոսներով և աշխարհիկ պատգամավորներով: Ընտրողական նիստը և օծման արարողությունները կատարվեցին նորա նախագահությամբ, նիստերի ժամանակ ղույզ կաթողիկոսներն իրար կողքի, համակամ և միասիրտ՝ իբրև հոգևոր հարազատներ, ժողովի գնալիս և գալիս միշտ ընթերակից իրար պատրիարքի հետ, իսկ օծման գնալու և վեհարան հետ գալու թափուրների ժամանակ մինչև իսկ ամպհովանու տակ, նորընտիր Հայրապետի ցանկության համեմատ, աջ և ձախ ժողովրդին օրհնելով, որ սրտառուլ տեսարանի տպավորության տակ, հափշտակության էր հասած յուր տպավորության մեջ: Այս միության և եղբայրության հանգամանքը շեշտվեցավ նաև նորահաստատ սահմանադրության մեջ, որի մի հոդվածն է. «Հայաստանյայց Եկեղեցու միասնականությունը զբխում էր իսկավորված է Ամենայն Հայոց Կաթողիկոսով, պատշաճ հարաբերություն պահելով Կիլիկիո Կաթողիկոսության հետ: Որոշվեցավ նույնպես Հայաստանյայց բոլոր եկեղեցիների մեջ անխտիր պատարագի ժամանակ հիշել Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվան հետ Կիլիկիո կաթողիկոսի, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո պատրիարքների անունները: Հայտնի է մեր ժողովրդին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը չէր հիշատակվում Կիլիկիո Կաթողիկոսության թեմերում, և Ամենայն Հայոց Հայրապետության եկեղեցական թեմերում Կիլիկիո կաթողիկոսի անունը: Սրանով էլ ժողովը կամեցավ շեշտված լինի Հայաստանյայց Եկեղեցու միությունը»:

Ազգային-եկեղեցական ժողովը իր երկրորդ նիստում որոշում է նաև համազգային շքով և հանդիսությամբ տոնել Հայրապետական Ա-

թոռի Սահյ էջմիածին հայրենադարձության 500-ամյակը, Գարեգին կաթողիկոսի գլխավորությամբ:

Ազգային-եկեղեցական ժողովը այդ հարցի առնչությամբ ընդունում է Գարեգին կաթողիկոսի հետևյալ բանաձևը. «Անդրադառնալով Ս. էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետության կատարած դերին անցած 500 տարիների ընթացքում, նշանակում է սրել և լուսավորել ժողովրդյան միտքը և գիտակցությունը այդ երկարատև շրջանի մասին, այս մտքով ժողովս օգտակար է համարում և որոշում է 1945—1946 տարին հայտարարել Մայր Աթոռի վերահաստատման հոբելանական տարի, ընդունելով միևնույն ժամանակ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հարատևությունը, նույն ժամանակի ընթացքում, որ ոչ միայն չի խանգարել Եկեղեցվո միության գաղափարը, այլև նման դեր է կատարել ազգապահպանության գործում իրեն եկեղեցական թեմերի մեջ, ինչպես և Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունները» (էջմիածին, 1945 թ., հունիս-հուլիս, էջ 32):

Ազգային-եկեղեցական ժողովը փակվեց հունիսի 25-ին: Բոլոր պատգամավորները ուրախ էին, տեսնելով մասնավոր ձևեր բերված ազգային-եկեղեցական միասնությունը, որի սրտառուլ խորհրդանշանը հանդիսացան երկու կաթողիկոսները, Մեծ ու Փոքր Մասիսները միմյանցով ամբողջացած, զեղեցկացած և հզորացած: 1945 թվականի էջմիածնի ժողովը արտակարգ երևույթ էր իր ազգային-եկեղեցական կուռ միասնականությամբ, ուր սրբագործվեցին մեր նվիրապետական Աթոռների սրտագին հարաբերությունները և ուր հռչակվեց մի անգամ ևս, որ մի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մի է հայոց Հայրենիքը:

Գևորգ Զ Կաթողիկոսը ժողովի փակման իր սրտառուլ ողջերթի ճառում ասել էր.

«Պատգամավոր մեր զավակներն իրենց խոհական գործերով և իմաստուն խոսքերով հմայեցին մեզ: Ժողովը ցույց տվեց շատ ընդգծելի կողմեր:

Տեսնում եմ հայ ժողովրդի դեպի Ս. էջմիածինն ունեցած անհուն սերը. այդ սերն է, որ Ձեզ հեռավոր վայրերից առաջնորդել է մինչև այստեղ, առ ոչինչ դարձնելով ճանապարհորդական նեղություններն ու դժվարությունները:

Հայ Եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր. բայց իրավական տեսակետով ոչ: Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսը նկատի չառնելով երկար ճամբորդության հետ կապված դժվարությունները,

անձամբ եկավ իբրև ուխտավոր և ճշմարիտ ու դրական միասնականության հիմք դրավ:

Այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ, որի համար պիտի աղոթեմ, որ այն մշտնջենական դառնա:

Տեսա ձեր բուռն զգացմունքը դեպի Ս. էջմիածինը և դեպի մեր սիրելի Հայրենիքը, որ բարձր վերելքներով փառավորվում է: Պիտի աղոթեմ Հայրենիքի և պետության զորացման համար:

1946 թվականի ապրիլին Գևորգ Զ Կաթողիկոսը գրեց իր հայրապետական անդրանիկ կոնդակը, որտեղ Մայր Աթոռի և Անթիքի ասի հարաբերությունների մասին գրվել էր հետևյալը.

«Եղբայրական սիրո ողջունս Քեզ՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսիդ, տիրավանդ ողջունս միաբանական ուխտիդ և հայրապետական օրհնությունս սիրեցյալ հոտիդ: Հոգիս հրճվում է տեսնելով հայ եկեղեցական Աթոռներին համերաշխ դիրքը և սիրո շաղկապը Մայր Աթոռի հետ, որ Մեր օրով առավել ևս պիտի զորանա, որով Ազգի կողմից ուսերիս բարձած քաղցր, բայց ծանր լուծը պիտի թեթևանա և դուրանա կոշմանս հետ կապված պարտքիս կատարումը:

Ցավ է ինձ, որ Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը զրկված է իր պատմական տեղերից, որ այնքան հարուստ է հայ ժողովրդի կուլտուրական և պատմական հուշարձաններով, որոնց հետ անքակտելիորեն կապված է Կիլիկիո հայ ժողովուրդը: Սակայն միսթարական է, որ այդ տարագիր և աստանդական Աթոռը այսօր դառնում է կայուն և հաստատուն: Առավել ևս ուրախ եմ, որ այդ Աթոռը բազմել է Մեր հոգեկից հարազատ եղբայր՝ Տանն Կիլիկիո շնորհազարդ Գարեգին Ա Կաթողիկոսը, Մեզ հետ միասին սնված ու դաստիարակված Ս. էջմիածինի Հոգևոր ճեմարանում: Երջանկահիշտակ Գևորգ Դ-ի և հայոց Հայրիկի ազգասիրական, հայրենասիրական և կրոնական զգացմունքներով ներշնչված, նոցա զգայուն և քնքուշ հոգու արտահայտությունները տեսած ու վայելած, Մեզ հետ անշուշտ պիտի պայքարի եկեղեցական և ազգային միասնության և համերաշխ գործունեության գաղափարները կյանքի մեջ իրացնելու և նոցա իրավական բնույթ տալու համար, որոնց սկիզբը դրվեցավ Ազգային-եկեղեցական ժողովում:

Հոգով ուրախ եմ նաև, որ Սուրիո գաղթական, արյունաքամ ու տանջված հայ ժողովրդի բեկորները հուսադրելը, միսթարելը, դաստիարակելն ու նոցա հոգեպես զորացնելը Քեզ է վիճակված: Մաղթում եմ Տիրոջը, որ արևշատություն պարզեն Քեզ և

մարմնով ու հոգով զորացնեն, որ իբրև երկրորդ Մովսես, Սուրիո հայ ժողովուրդը Ավետյաց երկիր առաջնորդես, որպեսզի իբրև Ազգամբողջանաք, հոգևոր, ազգային և պետական կենտրոն ստեղծենք ի մխիթարություն համայն Ազգի և հոգևոր դասին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը տպվեց «Հասկ»-ում:

Կիլիկիո շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա-ը Գևորգ Զ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակի մասին «Հասկ»-ի 1946 թվականի 6-րդ համարում, «էջմիածին և Կիլիկիո Աթոռները» խորագրով հոդվածում անում էր հետևյալ խորհրդածությունները.

«Մեզ անհուն ուրախություն է պատճառում կոնդակի ընդհանուր մտայնությունը, որ սիրո և միության գաղափարն է, և որ արտափայլում է ամեն մի պարբերության մեջ, բայց հատկապես սրտագին հարաբերությունը բոլոր Աթոռների հետ և ջանք այդ հարաբերությունը դարձնել ավելի սերտ, իրար լրացնող և դեպի նույն նպատակին ուղղված, որ Հայաստանյայց եկեղեցու միասնությունն է, համերաշխությունը և բարեբար ազդեցությունը հոտի ամբողջության վրա:

Ս. Հայրապետը անցած ժողովը համարում է իրավամբ բացառիկ երևույթ մեր պատմության մեջ, յուր լրիվ կազմով և ներկայացուցչությամբ բոլոր Աթոռների և եպիսկոպոսությունների հոգևոր և աշխարհիկ պատգամավորներով, շեշտելով մանավանդ մեծ Աթոռների գահակալների մասնակցությունը:

«Ցայտնեմք զուրախութիւն Մեր և զգոհունակութիւն հոգևոր եղբոր Մերում Ս. Գարեգին շնորհազարդ Կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, որ ընդ եկեղեցական և աշխարհական պատգամատուօք իւրովը նպաստաւոր եղև յոյժ միասնականութեան Հայաստանեայց եկեղեցւոյ և բարձր տրամադրութեան ժողովականաց և առհասարակ յաջող վերջաւորութեան ժողովոյս ըստ ամենայն մասանց: Զնոյն յայտնեմք և ամենապատիւ պատրիարքէն Երուսաղեմի Ս. Կիրեղի և տեղապանի Կոստանդնուպոլսոյ Ս. Գէորգայ աբեպիսկոպոսի Արաւմեանն»:

Այս խոսքերն ընդունելով որպես առհավատյա եղբայրական սրտագին հարաբերության, պատասխանում ենք, թե պարտականություն ենք համարում մեր բոլոր ումերը, գիրքը, խոսքը, փորձառությունն ու պաշտոնի հեղինակությունը ի սպաս դնել բոլորանվեր, ընդհանուր Հայաստանյայց եկեղեցւոյ փառին, պայծառութեան և բարոյական ազդեցութեան զորացման համար (ընդգծումը խմբագրությանն է):

Բնդոնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գերագահ դիրքը, կկամենայինք, որ ըստ ամենայնի պահպանվեր նրանց պատշաճ հարաբերությունը ըստ պաշտոնի և կոչման, ինչպես այդ գծվեցավ Սահմանադրության մեջ: Միասնությունը չպետք է շփոթել միապետության հետ և ոչ ընդհակառակը: Միասնականությունը կամենում ենք իրականացած տեսնել գիտակցական փոխադարձ ձգտումների միության մեջ, իրար զորավիզ ու նեցուկ լինելու և Աթոռների սերտ գործակցության մեջ, յուրաքանչյուրը յուր պարտքի և իրավունքի շրջանում: Մենք, իբրև Կիլիկիո Հայրապետական Աթոռի Գահակալ պատրաստ ենք Մեր կարելին բերել, հավերժացնելու ավելի սերտ, ավելի գիտակցական և միևնույն ժամանակ ավելի շրջահայաց հարաբերություն Մայր Աթոռի հետ, առաջնորդվելով միշտ առաքյալի խոսքով, թե «գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Կյանք բերող հոգին է Եկեղեցու համար ամենից կարևորը, որ պիտի զորացնենք և հավերժացնենք փոխադարձ համերաշխությամբ և գործակցությամբ:

Վերջին տասնյակ տարիներում «Աթոռների ավելի սերտ և համերաշխ գործակցության գաղափարը էջմիածնում զբաղեցրել է մտքերը, և Կիլիկիո Աթոռի կողմից առանց պատասխանի չէ մնացել: Գորա հետևանքն էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կանոնադրության մեջ մտավ նաև Կիլիկիո Կաթողիկոսության մասնակցությունը: Ուրախ ենք, որ այդ մեծ բախտը Մեզ վիճակվեցավ իրագործված տեսնել, անձամբ մասնակցելով և նախագահելով ընտրողական ժողովին» (Գարեգին Կաթողիկոս, «Դիպի լույս և կյանք», Անթիլիաս, 1947 թ., էջ 313—314):

1945—1952 թվականներին, Գարեգին Վեհի գահակալության օրերին, երկու Աթոռների համագործակցությունը շարունակվեց հօգուտ Հայ Եկեղեցու և ի միախառնություն մեր ժողովրդի:

1952 թվականի հունիսին վախճանվում է Գարեգին Վեհի, խոր սգի մեջ թողնելով Ամենայն Հայոց Հայրապետին, միաբանության, հայ հոգևորականության և հավատացյալ ժողովրդին:

Մայր Աթոռի պաշտոնաթերթի նույն ամսըվա խմբագրականը նվիրվել է հանգուցյալ Հայրապետին, «Հայրենասեր հայրապետի մահը» վերնագրով, որտեղ ընդորշելով մեծ հանգուցյալին, ասվում է. «1934 թվականին նա նշանակվեց Կաթողիկոսական լիազոր նվիրակ: Պառակտվել էր տարագիր Սփյուռքը. նա որպես քաղցրության ցող և հաշտության աղավնի, իր քաղցր հոգով հանդար-

տեցրեց բորբոքված կրքերը, և բոլորին հաշտվեց համախմբել Մայր Աթոռի և վերածնվող Հայրենիքի ջերմացնող գաղափարի շուրջը: Հայրենիք և եկեղեցական միապետություն, ահա նրա առաքելության ալֆան ու օմեգան... Նրա գահակալությունը Մեծի Տանն Կիլիկիո պատմական Աթոռին եղել է կարճ, բայց փառավոր գործունեությամբ բեղուն: Նրա շնչով ու ղեկավարությամբ Կիլիկյան աստանդական Աթոռը ապրեց կրոնական, ազգային, մշակութային վերելքի մի նոր շրջան:

...Ամենայն Հայոց Հայրապետությունը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իրար հետ շաղկապվեցին ավելի սերտ սիրով և եղբայրությամբ:

...Ցանկալի է, որ հետ այսօրիկ ավելի ամրապնդվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասիրտ համերաշխությունը, որի համար իր ողջ կյանքը նվիրեց երջանկահիշատակ Գարեգին Վեհի: Էջմիածինն ու Անթիլիասը ունեն միևնույն մեկնակետն ու նպատակը—հայ ժողովրդի հոգում վառ պահել քրիստոնեական հավատի ջահը, կրոնական, ազգային ավանդությունները, հայ մշակույթի սերը, նվիրվածություն Հայրենիքին, և արտասահմանում աճող մեր նոր սերունդի դաստիարակությունը տանել այդ ուղղությամբ: Նպատակների նույնությունը ստեղծել է գործակցության, համերաշխության, միասնության լուրջ, անմիջական և գործնական գաղափար: Հարկավոր է պաշտպանել մեր ժողովրդի միասնությունը և մշակութային ընդհանրությունը: Հարկավոր է պաշտպանել հավատացյալ հայ հոռը թշնամիների հարձակումներից, վառ ու պայծառ պահել հոգիների մեջ հավատի հուրը, կրոնի սրբությունները, հայրենի նվիրականությունները: Երկու Հայրապետական Աթոռներն էլ, այժմ մասնավանդ, ունեն կատարելիք պատմական խոշոր դեր: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, այսօր ավելի քան մի այլ ժամանակ, կարիք ունի Գարեգին Վեհի նման նվիրված, շիտակ, անկեղծ, հավատավոր հոգեւորականների, որոնք վառ պահեն հայ հավատը հայ սրտերում, հանուն Ամենայն Հայոց Հայրապետության, հանուն Ս. Էջմիածնի:

Հանուն Վեհափառ Հայրապետի, Գարեգին Կաթողիկոսի թաղմանը ներկա եղան Տ. Վահան արքեպիսկոպոսը և պրոֆ. Առաքել Առաքելյանը:

Գարեգին Ա. Կաթողիկոսի մահից հետո, միաբանական ընդհանուր ժողովի կողմից կրկին անգամ Տեղապահ է ընտրվում Խաղարքեպիսկոպոսը: Միաբանական ընդհանուր ժողովի դիվանը, իր նախագահ Տ. Զա-

րեհ եպիսկոպոսի ստորագրությամբ, խաղարքեպիսկոպոսի Տեղապահ ընտրության մասին հաղորդում է Ամենայն Հայոց Հայրապետին:

«Հաճույքով հաղորդում ենք Ձերդ Վեհափառության միաբանության անունից խաղարքեպիսկոպոսի Կաթողիկոսական տեղապահ ընտրվելու մասին»:

Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորում է խաղարքեպիսկոպոսի ընտրությունը հետևյալ նամակով:

«Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Կաթողիկոսի կարգումը Ձեզ՝ ի կենդանության՝ Լնդհանուր տեղակալ՝ նշանակ է նորա առ Ձեզ տաճած վստահության և իմաստուն կարգադրության: Աթոռիդ միաբանության կատարած ընտրությունը՝ գրավական է նորա խոհական և համերաշխ գործունեության: Հայ եկեղեցական Աթոռները, եպիսկոպոսները և վանական ծայրագույն վարդապետները՝ իրենց բարձրագույն զբաղությունը՝ զարգացրել են հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նորա պայքարող ոգին հանուն Ազգի և Հայրենիքի, վառ ու կենդանի են պահել նորա մեջ հավատարմության զգացմունքը Հայ Եկեղեցուն, նորա եկեղեցական դավանանքին և ազգային ու կրոնական սովորություններին. սույնպես նաև ջանք չեն խնայել պահպանելու նորա ֆիզիկական գոյությունը, որի շնորհիվ Հայ Ազգը կենդանի է մնացել ցայսօր:

Այսօր, միջազգային փոխհարաբերությանց չափազանց լարված պայմաններում, Հայ Եկեղեցու դեկավարներին, վարից վեր, պահանջվում է միություն և համերաշխ գործունեություն, մեր նախնայաց անձնվեր նվիրվածությունը Ազգին և Եկեղեցուն, այլև մեր Ազգի հատվածյալ բեկորների ամբողջացում ազգաժամկետության միջոցով, ամբողջական կտու միություն Հայրենի երկրում:

Աղոթենք Բարձրալիին, որ պարգևե մեզ բուրբալ կար և ուժ, պահպանե մեր հավատարմությունը՝ հայ պատմության մշակված վերահիշյալ ազգային ավանդներին, որպեսզի արժանանանք հայ ժողովրդի գոհունակության ու օրհններին և օտարների հարգանքին:

Աստվածային օրհնությունն ենք հայցում Ամենապատվությանդ, Աթոռիդ միաբանության և հավատացյալ հայ ժողովրդի վերա»:

Հայ ժողովրդը, ի սփյուռս աշխարհի, Գարեգին Կաթողիկոսի վախճանումով մտահոգվում էր Կիլիկիո Կաթողիկոսության վիճակով: Միաբանությունը և ժողովրդը ցանկանում էին համերաշխություն, որը ոչ միայն պատիվ էր բերելու Կիլիկյան Աթոռի միաբանությանը, այլև ռուսախոսությանը կլեցնի Հովսեփյան Գարեգին Ա բաղմերախտ

կաթողիկոսի մահից հետո Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի ճակատագրով մտահոգված հայերի սրտերը: Հուսալի է, որ միաբանական ժողովի ցուցադրած համերաշխ գործունեությունը շարունակվի հետագայում ևս Կիլիկիո Կաթողիկոսության ենթակա բոլոր թեմերի բոլոր ժողովներում և այդպիսով, ինչպես նշվել է Ամենայն Հայոց Հայրապետի պատասխանում, միջազգային քաղաքական փոխհարաբերությունների ներկա լարված պայմաններում, ողջ հայ ժողովրդին կապահովի իր նյութական և հոգեվոր ուժերն Ազգի, Հայրենիքի և աշխարհի խաղաղության օգտին միայն ի սպաս դնելու բարենպաստ դրությունը» («Էջմիածին», 1952 թ., № 11—12, էջ 11):

Մայր Աթոռի բարի ցանկություններն էին վերագրյալ տողերը, ցանկություններ, որոնք արտահայտում էին հայ ժողովրդի իղձերն ու շահերը:

1953 թվականին «Էջմիածին» ամսագիրը, հոկտեմբերի իր Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետությունը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ խորագրով խմբագրականում, հանուն Վեհափառ Հայրապետի, գոհունակությամբ գրում էր, որ «Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ ամենապատիվ Տ. խաղարքեպիսկոպոսի խոհուն և շրջահայաց վարչագիտությամբ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության նախապատրաստական աշխատանքները վերանալու վրա են և մոտ ժամանակներու Աթոռի միջոցով Հայրապետանոցում կընտրվի արժանավորագույն եկեղեցականը և այդ արժանավոր ընտրությամբ մի անգամ ևս կփառավորվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ ի մխիթարություն Կիլիկյան թեմերի հայ հավատացյալ ժողովրդի և ի սփոփանս Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետ նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ հայրենասեր Կաթողիկոսի»:

... Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության հարցը այսօր, սակայն, Կիլիկյան թեմերի մասնավոր ու տեղական հարցը չէ միայն, այլ նաև՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանուր հարց, որը շոշափում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կենսական շահերը և առնչվում է մեր ազգային-եկեղեցական կարևոր մի հարցի՝ միասնականության հարցի հետ:

... Գարեգին Վեհ՝ իր գրական-բանասիրական, պատմական, կրոնական չգերազանցված վաստակների հետ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ավանդ թողեց նաև մի կենդանի և հոգևոր ժառանգություն. դա հայրենասիրության և էջմիածնասիրության բոցավառ զգացումն էր, որով նա ապրեց և ստեղծագործեց սվեյի քան 60 տարիներ:

... Կիրիկյան թեմերի հայ հավատացյալ ու հայրենասեր ժողովրդի, Անթիլիասի հոգևորականության, ազգային-եկեղեցական թեմերի, մամուլի, մտավորականության պատվո, խղճի, հայրենասիրության և եկեղեցասիրության գործն է՝ ընտրել այնպիսի մեկին, որ վառ պահի Կիրիկիո պանդուխտ բայց հայրենասեր ու ազնիվ ժողովրդի հոգում նախնայաց հայրենասիրական ու էջմիածնասիրական բոցավառ ոգին ու զգացումը, ընտրել այնպիսի մեկին, որ այսօրվա բարդ ու դժվար պայմաններում կարենա բարձր պահել Մեծի Տանն Կիրիկիո պատմական Աթոռի հմայքը, կարենա խորացնել իր Աթոռում սրտագին ավանդություն դարձած հայ ազգային-եկեղեցական միասնությունը, նախանձախնդիր լինի նախնայաց ոգով, աչքի լույսի պես պահել-պահպանելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաքելահաստատ կարգն ու կանոնը, մեր զարավոր Եկեղեցու յուրահատուկ ազգային սրբազան ապաստությունները, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ինքնուրույնությունը, ազգային նկարագիրը, ուղղափառությունը, ժողովրդական սկզբունքները, և աշխատի ամեն ինչ քան երբեք սերտացնել կապը Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ:

Հարկ է կազմակերպված անցկացնել Մեծի Տանն Կիրիկիո կաթողիկոսական ընտրությունը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրականության և հայ հավատացյալ ժողովրդի միասնականության սկզբունքներով: Պատմական այդ ընտրությունը հարկ է վերածել հայ ժողովրդի միասնականության և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության տոնի, հայ ժողովրդի սիրո և հարգանքի, խմբավածության տոնի՝ իր

Մայր Եկեղեցու և նրա արժանավոր քաջ հովվի շուրջը:

Զպիտի տարվել կուսակցական ամուլ պայքարներով, որոնք ոչ մի լավ բան չեն խոստանում մեր Եկեղեցուն և ժողովրդին, բացի նրանից, որ կարող են վարկաբեկել հայ խաղաղասեր ու աշխատունակ ժողովրդի բարի անունը և շարաշահել մեզ հյուրընկալող ազնիվ և բարի արաբ ժողովրդի համբերությունն ու հանդուրժողությունը:

Մեծի Տանն Կիրիկիո նոր կաթողիկոսի ընտրությունը պայծառ ու անհերքելի ապացույցը պետք է լինի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միության և հայ ժողովրդի միասնականության, մի փայլուն ինքնաբերական սրտագին ակտ՝ Կիրիկյան ժողովրդի և թեմերի հայրենասիրության և էջմիածնասիրության: Այսօր, ավելի քան երբեք, այդ ընտրության մեջ պետք է դրսևորվի Կիրիկիո հայ ժողովրդի կամքի, ձգտումների, գործողությունների միասնությունը: Այդ է պահանջում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի գերագույն շահը, այդ են պահանջում ժամանակի ոգին և հանգամանքները:

Վեհափառ Հայրապետի հրավերով, խաղ սրբազանի տեղապահության օրերին, Կիրիկիո Կաթողիկոսության Անթիլիասի դպրիվանքի վերատեսուչ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը եղավ էջմիածնում: Սրբազանը Հոգևոր Ճեմարանի սարկավազներին մի քանի ամիս աստվածաբանություն դասավանդեց, այս կերպով ամրապնդելով նաև կապը Հոգևոր Ճեմարանի և Անթիլիասի դպրիվանքի ուսանողության միջև, ուսանողներ, որոնք վաղը լինելու էին մեր Եկեղեցու ծառայության նվիրված մշակներ:

(Շարունակելի)